

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«Հ կարավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 1)»

21 հունվարի 2011թ.

Ժամը 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի աուդիո-վիզուալ սրահի վերանորոգում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
3. «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին:
(Լևոն Պարտազճյան)

4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Ս. Բարխուդարյան)

- 4.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 4.2 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 4.3 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 4.4 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց հանձման ծրագրի մասին:
- 4.5 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 4.6 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:
- 4.7 «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

- 4.8 «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ):
- 4.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ (N 1)):
- 4.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ (N 2)):
- 4.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ (N 4)):
- 4.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 19-ի N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ):
- 4.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):
- 4.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-896-Ա որոշման մեջ լրացում կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 4.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ (N 1)):
- 4.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ

հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (ամբրիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ (N 2):

5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Ա. Բարխուդարյան)

- 5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):
- 5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ (N 2):
- 5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-748-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ) :
- 5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի N Մ-640-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-895-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-897-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 5.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

6. Այլ հարցեր

- 6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանջնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-760-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 2010 թվականի N Մ - - - - -
 քաղ. երևան

ՆԱԽԱԳԻԾ

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑ-
 ԱՈՂ «ԵՐԵՎԱՆԻ Պ. ՉԱՅԿՈՎՍԿԻՈՒ ԱՆՎԱՆ ԱՐԱԺԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
 ԱՈՒԴԻՈՎ-ՎԻԶՈՒԱԼ ՍՐԱՀԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N -10, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N -10 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի -ի N ԱԱ/3-4/ եզրակացությունները, որոնք ու մ է:

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3894300 դրամ ընդհանուր արժեքությամբ «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի առդիո-վիզուալ սրահի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝
 «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2010 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված N ՀՀ/ԶԴ-01/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3894300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հ Ա Ս Ս Ս Վ Վ Ո Ւ Է

**«Հայաստան» համահայկական
 հիմնադրամի գործարարի տնօրեն
 Արմեն Արսենյան**



2010թ. 12/12/10

**« Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի
 առդիո-վիզուալ սրահի վերանորոգում»
 ԾՐԱԳՐԻ**

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի սրահի ուսումնասիրության պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրինքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ԴԴ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ԳՎԴ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ԳԳ ք. Երևան, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 3.894.300,00 ՀՀ դրամ:

6.	Բարեգործություն ստացողը	Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տեսությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ դեկտեմբերի 22-ից մինչև 2011թ. մարտի 22-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամրագրված ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ծրագրի արդյունքների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի առդիո-վիզուալ սրահի վերանորոգում՝ 3.894.300,00 ՀՀ դրամ առանց ԱԱԳ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Աշակույթի նախարարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության մկատմամբ վերաակտիվության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության մկատմամբ վերանայությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակալան

Արմեն Դադեբեյան

1/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎՃԱՐԱԿԱՆ ԿԱՆՆԱԿՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
 ՈՐՈՇՈՒՄ
 2010 թվականի N Մ - - Ա 1/2
 քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐԱԽՆ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻՉՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԱԳՐՈՏԵՍԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄԱՅԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂՏԵՍԻՆԻԿԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N -10, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N -10, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի -ի N ԱԱ/3-4/ և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N եզրակացությունները, որ ո ռ ո մ է.

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5782000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազային համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ «Հայաստան» հիմնադրամի միջոցներով Քելառուսի Հանրապետությունից ձեռքբերված գյուղտեխնիկական (10730 ԱՄՆ-ի դոլար դրամ արժեքով, բեռնափոխադրման ծախսերը մինչև Բագրատաշեն կազմում են 800 ԱՄՆ-ի դոլար, մինչև Երեան՝ 1049870 դրամ, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԲԵԼԱԶ ԿԱՎԿԱԶ ՏՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01832069) 2010 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N ԳՏ-01/10 պայմանագրում նշված գործարքը, որով նշվում է մատակարարի վարձավճարը՝ 582840 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

Հ Ա Տ Տ Ա Տ Վ Ա Մ ՈՒ Մ



«ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի համար գյուղտեխնիկայի ներմուծում»
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Քաղցրեղ ԳՂ Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազան գյուղատնտեսություններով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրինքով աստիճանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններին
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ԳՂ, քաղ. Երեան, Կառավարական տուն N 3, ԳՎԳ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ԳՂ Տավուշի մարզ, Սարիգյուղ գյուղ, գյուղատնտեսության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 5.782.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	Սարիգյուղի և մոտակա գյուղերի համայնքները
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել հոկտեմբերի 22-ից մինչև 2011թ.փետրվարի 22-ը:

8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամրառա՞նշտ ֆինանսավան միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում «ԲԵԼԱԶ ԿԱՎԿԱԶ ՏՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից:
9.	Չեղջ բերվող (ներմուծվող) արտադրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծախսերը և նախատեսվող գինը	գյուղտեխնիկայի ձեռքբերում և փոխադրում մինչև Բագրատաշենի մակարդակ՝ 4,149,290,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի (ավելակում ենք մաքսային արտոնություններ) գյուղտեխնիկայի փոխադրում մինչև Երեան՝ 1,049,870,00 ՀՀ դրամ (ավելակում ենք հարկային արտոնություններ) ծառայությունների վարձավճար՝ 582,840,00 ՀՀ դրամ (ավելակում ենք հարկային արտոնություններ)
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության մկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության մկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (նառնայնային եւ անմիջից հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի կողմից
 Կլոմեն Դարբինյանը

1/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

1/2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

30.12.10 № 3/3.8-2/11076-10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 27.12.2010թ. N15/15.1/16789-10 գրությամբ ներկայացված «Հայաստան»
համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի
համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի 2-րդ
կետում նշված «800 ԱՔՄ-ի» բառերը փոխարինել «800 ԱՄՆ-ի» բառերով, իսկ
«1049870» թվերից հետո ավելացնել ՀՀ դրամ բառերը:

Հարգանքով՝

Ա. Զանցուղայան

Կատարող՝ Ա. Այվազյան, հեռ. 595-227

034/31536-10



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ ՈՒ Թ Յ Ա Ն Լ Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն
Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

1/2

375010, ք. Երևան, Հալաբյան 41/Ա

«28» «12» 2010թ. N 5268-10

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
Պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

ի կատարումն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի
27-ի 15/15.1/16789-10 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի
համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

035/31229-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

1/2

0010, Երևան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3

Հեռ./Փաքս (374 10) 524-641
Էլ. փոստ. frdmoa@agrounit.am

Ի պատասխան Ձեր _____ N _____

28.12.10 N 94/04.1
6142-10

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Ի պատասխան Ձեր 27.12.2010թ.
N 15/15.1/16789-10 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի
ազրոտելնիկական բազայի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Գ. Աղվերդյան

Ազրոտելնիկական և սննդամթերքի
անվտանգության վարչություն
235471

032/31182-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

664/3-6/3305-10
28.12.10

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 27-ի համար 15/15.1/16789-10 գրությամբ կարծիքի
ներկայացված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող
«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի
ազրոտելնիկական բազային համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել բեռի
փոխադրման ծախսերը:

Ա. Աղվերդյան

044/31266-10

Կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР
REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

1/2

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, РА, Іjevan Sahmanadrutyān 1
հեռ. тел. phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB <http://tavush.region.am>

01/11.1/3990-10
29.12.10

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.12.2010թ. թիվ 15/15.1/167789-10 գրության՝
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի
համար գյուղտեխնիկայի ներմուծում ծրագրի մասին» որոշման նախագծի
վերաբերյալ, հայտնում եմ, որ այն համայնքի ղեկավարի մասնակցությամբ
քննարկվել է մարզպետարանում և արձանագել հավանության:
Դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒՆԱԲՅԱՆ

կատ.Ռ. Մեխիզջանյան

119/31364-10

ՏԵՐԵՎԱԿ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի համար
գյուղտեխնիկայի ներմուծում ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ֆրանդերի համակարգման հանձնաժողովի որոշման
նախագծի վերաբերյալ

Նիտություն կամ առաջարկության բովանդակություն	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն - 30.12.10, N 3/3-8-2/1076-10	
1. Սակագին 2-րդ կետում «800 ԱՔԱՄ-ի» քանակը փոխարինել «800 ԱՄՆ-ի» քանակով և «1049870»-ից հետո ավելացնել «դրամ» բառը	1. Կրկնակն ուղղված է
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտների կոմիտե - 28.12.10, N ԱԱ/3-6/3305-10	
1. Հստակեցնել փոխարժեքի մասին	1. Կրկնակն ուղղված է

1/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունվարի 2011 թվականի N Մ -
քաղ. երևան

- Ա 1/3

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԳԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ԻՐԱԿԱՆՏՎՈՂ «ՆՎԵՐՆԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի
N, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010
թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամտների կոմիտեի 2010
թվականի դեկտեմբերի -ի N, Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N,
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի
N, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի
N, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի
N, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի
-ի N, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N,
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N,
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N և
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N
եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակե, «Քրիստոնեական մշակութային միջազգային
ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ քաղ.
երևան, Վաղարշ Վաղարշյան 12, ՀՎՀՀ՝ 00250922) 2011-2012 թվականին իրականացվող՝
212500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Նվերներ» Հայաստանի երեխաներին»
ծրագիրը (լցվում է):
2. Առաջարկել «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ»
բարեգործական հասարակական կազմակերպությանը մինչև յուրաքանչյուր եռամսյակին
հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմա-
կերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու
մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝
ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

1/3

« 13 » 01 2016 թ.

N 98/Ատր/Ֆ-2/51-11

Ձեր 30.12.2010թ.
N 15/15.2/17111-10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Մինոնյանին

Հարգելի պարոն Տեր-Մինոնյան,

Քննարկելով ««Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ ծրագիրը բարեգործական որակելու կապակցությամբ առաջարկություն և դիտողություն չունեն:

Հարգանքներով

 Տ. Քերիկյան

Կատարող՝ Բարեգործական ծրագրերի
համակարգման բաժին
հեռ.525-893

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>

040/584-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

1/3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

12.01.11թ. N 28/22/21-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՄԻՆՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Մինոնյան

Ձեր 30.12.2010թ. թիվ 15/15.2/17111-10 գրության կապակցությամբ՝ «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012թթ. իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/360-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
DEPUTY MINISTER

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

18/1

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Yerevan, Main Avenue, Government House 3, E-mail: miens@edu.am, www.edu.am

N. 03/07.2/12663-10 « 07 12 1/3 2010

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 06.12.2010թ, N 15/15.2/15492-10 գրության, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Նվերներ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ «Կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

Կար.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

03/28854-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԱ/3-4/25-11
12.01.11թ.

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.12.2010թ. թիվ 15/15.2/17111-10 գրությանը կից ներկայացված «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի վերաբերյալ կարծիքը տրված է ՀՀ ԿԱ ՊԵԿ 13.12.2010թ.-ի թիվ ԱԱ/3-4/3069-10 գրությամբ:

Ա. Ալավերդյան

Կատարող՝ Անտոնակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652

094/362-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 18/1

0015, Երևան, Մ. Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

13.12.2010 թ.

1/3

ՁԿ/3-4/3069-10

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրությանը կից ներկայացված
«Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ հայաստանյան միջեկեղեցական
բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից 2011-2012 թվականներին
իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» որոշման
նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

1. ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները հայտարարագրվում
և մաքսային ձևակերպում են ստանում ըստ ԱՊՀ երկրների Արտաքին տնտեսական
գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ): Վերջինիս միջոցով
ապրանքների դասակարգման գործընթացը կանոնակարգվում է ԱՏԳ ԱԱ-ի
մեկնաբանման հիմնական կանոններով և առանձին ապրանքային խմբերի ու
դիրքերի պարզաբանումներով: Այդ կանոններով, մասնավորապես, նախատեսված
է, որ խառնուրդներն ու բազմատարր ապրանքները պետք է դասակարգվեն
խառնուրդի կամ բազմատարր ապրանքի հիմնական բաղադրիչի ծածկագրի ներքո,
եթե հնարավոր է որոշել, թե որն է հիմնական բաղադրիչը:

Տվյալ դեպքում, պայմանականորեն «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին»
անվանվող իրերի լրակազմի բաղադրիչներից որևէ մեկը չի կարող դիտարկվել
որպես լրակազմի հիմնական բաղադրիչ, մասնավորապես, որ տուփերի
պարունակությունը կարող է տարբեր լինել: Հետևաբար, անհնարին է դառնում

044/29487-10

1/3
18/1

ներմուծվող բեռների հայտարարագրման և մաքսային ձևակերպումների հետագա
գործընթացը:

Միաժամանակ՝ վերոնշյալ հստակեցման բացակայությունը բավարար
հիմքեր չի տալիս եզրակացնելու, որ ներմուծվող բեռները անվտանգ են և
շահառուների առողջության համար վնասակար չեն:

2. Անընդունելի է բեռի բաշխման և շահառուների վերաբերյալ
կազմակերպության կողմից ներկայացված տեղեկատվությունը, քանի որ ըստ
ծրագրի 7-րդ կետի՝ բարեգործություն ստացողները նախապես անհայտ են:
Վերջինս հակասում է ՀՀ-ում բարեգործության ոլորտը կարգավորող
օրենսդրությանը:

3. Ծրագրի 8-րդ և 10-րդ կետերի միջև առկա է հակասություն: Ծրագրի 10-րդ
կետում բեռների ներմուծում է նախատեսված նաև 2010 թ.-ին, այն դեպքում, երբ 8-
րդ կետի համաձայն ծրագրի սկիզբ է համարվում 2011 թվականի հունվարի 1-ը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ներկայացված ծրագրի բարեգործական
որակմանը դեմ է:

Ա. Ավակյան

Կատարող՝ Անտոնակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան 15. Արցիշտիի փողոց №1

18/1

№ 02/34-25106 հ

«16» 12 2010 թ.

Չեր

1/3

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Միմոնյան


Ի պատասխան Ձեր 06.12.10թ. հ. 15/15.2/15492-10 գրության՝
տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ»
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից
իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին՝
որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով՝

Handwritten signature and initials

Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ռ. Զարայան
հեռ. 51 41 79



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

0201 ք. Աշտարակ, Հանրապետության 4, Հեռ./ֆաքս (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 ր. Аштарак, Ашрапетутян 4, Тел /факс (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 с. Ashtarak, Hanrapetutyayn 4, Тел /Fax (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am

07.12.2010 N 01/08/3356 - 10

1/3

Հայաստանի Հանրապետության Կառավարության
Բարեգործական Ծրագրերի Համակարգման
Հանձնաժողովի Նախագահ Պարոն Ս.Տեր-Միմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Միմոնյան

Ձեր՝ 06.12.2010թ. 15/15.2/15492-10 գրությունով ներկայացված ԿԲԾՀԸ ծրագիրը
առաջարկում ենք որակել բարեգործական:

Handwritten signature

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Կ.Տոնյան
Հեռ./0232-3-24-64/

110/28826-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

18/1

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 07 >> 12 ----- 2010թ.

№ 01/06/3204-10

1/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

<<Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Նվերներ՝ Հայաստանի երեխաներին>> որոշման նախագիծը քննարկվել է Արմավիրի մարզպետարանում և հավանության է արժանացել:

Չենք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱԿՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Լ. Մուրադյան
Ծ. Գրիգորյան

112/28530-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ. 36
հեռ. /0264/2-34-31

№ 01/15/3197-10

1/3

« 10 » 12 ----- 2010թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Պ-ՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեր՝ 2010-12-06 թիվ 15/15.2/15492-10/

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում քննարկվել է «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության /ՔՄՄԾ ԲՀԿ/ կողմից իրականացվող 2011-2012թթ. ընթացքում «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին», նվերների բաշխման ծրագրի մասին որոշման նախագիծը և այն հավանության չի արժանացել:

Հարգանքով՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

Վ. Մնացականյան
0-264-2-38-75

113/29267-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

2301 ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/Ֆաքս (+374 223) 2 37 13 E-mail marzpetaran@Kotayk.region.am

9.12.2010 թ. 01/14.2/3835-10
Ձեռք

Ը/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին հասցեագրած 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրության, մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը՝ «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագիրը բարեգործական որակելու մասին:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

115/29053-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

18/1

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

4-61-92
Fax 2-28-77

թիվ 102.1/104.3/3976-10
« 10 » 12 2010 թ.

Ը/3

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեռ 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրությամբ.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական են վերաբերվում «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011թ. չնթացքում իրականացվելիք «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ԿԱՐԲԻՆՅԱՆ

114/29287-10



4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, Կ. Иджеван Сагманадрутян 1, РА, Ijevan Sahmanadrutyayn 1
հեռ. тел. phon. /0263/ 4-00-45, 3-23-56 ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB <http://tavush.region.am>

13.12.10թ.

01/13.3/3676-10
18/1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.12.2010թ. N 15/15.2/15492-10 գրության հայտնում եմ, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» որոշման նախագիծը քննարկվել է մարզպետարանում և արժանացել հավանության: Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՂՈՒՂԱՐՅԱՆ

Կատ. Ա. Փաշինյան
հեռ. /0263/3-22-45

119/29404-10



18/1

3301ք. Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, է-հասցե՝ syunik@mta.gov.am

«ԾԴ» 12 2010թ. № 01/3918-10

1/3

Ձեր _____ № _____

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը: Դիտողություններ և առարկություններ չունենք:

Ս. ԻՍԱԶԱՏՅԱՆ

Կատարող՝ Ա.Օստրյան
Հեռ. /0285/ 2-35-10

117/28845-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

1/3

18/1

ք. Եղեգնաձոր, Ծառույան - 9

<15> 12 2010թ.

N 01/03.1/4517-10

Հեռ. /374010/ 287401, 2 25 22

ֆաքս /374010/ 28 18 32

ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի պատասխան Ձեր 06.12.2010թ. N 15/15.2/15492-10 գրության՝ հայտնում ենք, որ հավանություն ենք տալիս Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ Հայաստանի երեխաներին» որոշման նախագծին:

Հարգանքներով՝

Ս. ԱՊԳՐԱՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Գաբրիելյան
հեռ. 2-25-51

118/29681-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

1/3

18/1

<< 10 >> 12 2010թ.

N: 01/49338-10

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 06.12.2010թ.

թիվ՝ 15/15.2/15492-10

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» որոշման նախագիծը:

Ձենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ս. ԳԻՉԻՐՅԱՆ

Հ. Արշակյան
/0312/3-16-26

116/29148-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ



МАРЗПЕТ АРАРАТА

1/3

ԼԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունվարի 2011 թվականի N Մ -
քաղ. երևան

- Ա 1/4. 1

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՏԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 113/1-113727-10-28 12 2010թ.

Ձեր' թիվ 15/15.2/15492-10
07.12.2010թ.

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ պարոն՝ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

««Քրիստոնեական Մշակութային Միջազգային Ծառայություններ»» բարեգործական
հասարակական կազմակերպության ««Նվերներ Հայաստանի երեխաներին»» ծրագիրը
խնդրվում է ճանաչել բարեգործական:

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-2/-10, Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010
թվականի դեկտեմբերի -ի N ԱԱ/3-6/-10 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով
Բելոռուսիայից Վ. Կոլովի անվան գործարանից գնված և «Հայաստան» համահայկական
հիմնադրամի հասցեով ստացված տրանսֆորմատորային ենթակայանների (1 տեղ, 2 հատ,
4750 կգ ընդհանուր քաշով, 515300 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման
ծախսերը կազմել են 1782921 դրամ, ՄՃՓ մաքսատուն) ներմուծման ծրագիրը:
Տրանսֆորմատորները հանձնվելու են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Գորիս քաղաքի «Ձանգեգուր» սրտաբանական կենտրոնին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան
ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ԱՐՄԵՂՅԱՆ

Կատ' Գ.Եղիազարյան
Հեռ./0235/2-05-77

111/31175-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼՆԽԱՐԱՌԻԹՅՈՒՆ
 ԼՆԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱԿՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

1/4.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
 Հեռ. (+374 10) 59 52 26

10.01.11 № 3/3.8-2/1114-10

Ձեռք № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
 բարեգործական ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի նախագահ՝
 պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 27.12.2010թ. N15/15.1/16803-10 գրությամբ ներկայացված «Հայաստան»
 համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին
 ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
 որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
 շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Զանջուղազյան

Կատարող՝ Ա. Այվազյան, հեռ. 595-227

021/7-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՆԹԵՐ
 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԼՆԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.

ԱԿ/3-6/3306-10

28.12.10

ՀՀ կառավարության բարեգործական
 ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի նախագահ
 պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 27-ի համար 15/15.1/16803-10 գրությամբ կարծիքի
 ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված
 բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ
 անհրաժեշտ է նախագծում <<517100 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման
 ծախսերը կազմել են 4900 ԱՄՆ-ի դոլար>> արտահայտությունը փոխարինել
 <<515300 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1782921
 ՀՀ դրամ>> արտահայտությամբ:

Ա. ԱՎԱԿԵՐԴՅԱՆ

044/31267-10

Կատարող՝ Լ. Հակոբյան
 միջազգային հարաբերությունների բաժին
 հեռ. 59 43 49



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

Է/4.1

3301 ք. Կապան, Գ. Լժեղեհի I, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mra.gov.am


«28» 12 2010թ. № 01/4230-10

Ձեր 2010-12-27 № ~~27069-10~~ 16803-10

«Հատավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ա. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հայաստան» մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում քննարկվել և հավանության է արժանացել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը: Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չեն եղել:

 Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Ծատրյան
Շեռ. /0285/ 2-35-10

117/31 176-10

ՏԵՂԵԿԱԼՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը վերաբերյալ»

Հիմնավորում	Պիտույության կամ առաջարկության բովանդակությունը
ԱՄ/3-6/3306-10	«Հ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե - 28.12.10, N ԱՄ/3-6/3306-10»
1. Կատարված է համապատասխան ճշտում	1. Կատարված է համապատասխան ճշտում
1-ին կետում	1-ին կետում
բեռնափոխադրման ծախսերը	բեռնափոխադրման ծախսերը

Է/4.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա Է/4.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի -ի N ԱՄ/3-6/-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Հայաստանում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով որպես օժանդակություն ուղարկված բժշկական պարագաների (10 տեղ, 2103 կգ ընդհանուր քաշով, 93182.68 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6985 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն, ցանկը կցվում է) ներմուծման ու Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը:
2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Յանկ
ԱՄՆ ՄՀՀ կողմից ԼԳՀ համար որպես մարդասիրական օգնություն
ստացված բեռի

1/4.2

Տեղե րի քիվը (պալ ետ)	ապրանքի անվանումը	ապրանքի քանակը (հատ)	քաշը բրտտո (կգ)	քաշը նետոտ (կգ)	միավոր ի գինը (ԱՄՆ դոլար)	ընդհա նուր գինը (ԱՄՆ դոլար)
5	տակդիր	11 000	1174	1100	2.6	28 600
1	տակդիր- սավան	4 000	296	280	2.46567	9982.68
2	վերքի համար կաշտոն ժապավեն	18 000 տուփ	379	360	2.2	39 600
2	էլաստիկ քիմո	4 000	254	240	3.75	15 000

ՀՀ-ում կատարվող փոխանցման ներկայացուցչության
վերականգնման համար օգնության
հոդուրանի
Ցեղասպանության համար
01538293

13.12.2010 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԱՅԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

1/4.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

11.01.11 № 1.1/3.8-2/20-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.12.2010թ. N15/15.1/16998-10 գրությամբ ներկայացված Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման
ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Շահնագարյան

034/230 - 11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

1/4.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

12.01.11 N 78/22/29-11

Ձեռ N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Միմոնյան

Ձեր 29.12.2010թ. թիվ 15/15.1/16998-10 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

020/359-11

Կարգող Ս. Մկրտչյան
հեռախոս 52 27 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.2

0015, Երևան, Մ.Նորեմացու 3, 7

Ծ»ճ.

3-6/3363-10

30.12.10

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Միմոնյան,

Սույն թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 15/15.1/16998-10 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել բեռի մանրամասն ցանկ:

Ա.ԱՆԱՎԵՐԴՅԱՆ

0214/31575-10

Կարգող՝ Ս. Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ. 594 649

«Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բերի ներմուծման ծրագրի մասին»
 ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

1/4.2

Հիմնավորում	Հիտորության կամ առաջարկության բովանդակությունը
2011 թվականի N 5- քաղ. երևան	1. Անիրաժեշտ է կցել բերի ցանկը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի N 5-
 քաղ. երևան

և 1/4.3

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑԱԿԱՑ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի -ի եզրակացությունները, ո Ր Ո Շ ՈՒ Մ է:

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արարական էմիրություններից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված բեռների (128 կգ քաշով, 2690 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ բեռնափոխադրման ծախսերը և 1530 կգ քաշով, 12579 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, Սյունիքի Տ/Ս) ներմուծման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի համայնքի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԾ

բարերար Լևոն Հայրապետյանի կողմից ԼՂՀ սոցիալառիվության ուսուցակ ԼՂՀ Սարտակերտի շրջանի Վանքի համայնքի համար ուղարկված բեռի

1/4.3

h.h. N/4	Ապրանքի անվանումը	Չարդի միավորը	Ըմբանկը	Գինը ԱՄՆ դոլար	Արժեքը ԱՄՆ դոլար
1.	Ջահ	հատ	20	28	560
2.	Բրա	հատ	10	12	120
3.	Լրացրասնդան	հատ	10	128	1280
4.	Արձանիկ	հատ	4	117	468
5.	Անդանի կամայնկտ	հատ	2	85	170
6.	Քաշանկեր շատրվան	հատ	2	315	630
7.	Շի տակոբի	հատ	54	23	1242
8.	Սնդան պահարանով	հատ	15	88	1320
9.	Բացկարոտ	հատ	18	75	1350
10.	Չիրկիզվազ պանարան	հատ	4	90	360
11.	Նկար	հատ	14	130	1820
12.	Երեսապատման սպիկ	հատ	336	3.5	1176
13.	Լույս 1.1.0	հատ	36	21	756
14.	Լույս 12 V	հատ	50	13	650
15.	Արևային պանկ	հատ	2	130	260
16.	Փոխարկի	հատ	3	63	189
17.	Էլ. դատչիկներ	հատ	3	58	174
18.	Կնարակալան հուշանվեր	հատ	36	1.5	54
19.	Բարձրակարգ 1500 վատտ	հատ	2	380	760
20.	Բարձրակարգ 300 վատտ	հատ	2	220	440
21.	Բարձրակարգ 950 վատտ	հատ	2	45	90
22.	Միկրոֆոն	հատ	3	40	120
23.	Միջեր (բարձրակարգ միկրոֆոն կառավարման վահանակ)	հատ	1	200	200
24.	Անվտանգության համակարգ	հատ	1	700	700
25.	Մեծալիզեն լամպ	հատ	10	38	380
	Ընդամենը		640	38	15269

ԼՂՀ սոցիալական առաքելության աշխատակազմի բարեգործական ծրագրի պետի փոխարինող



Սարգսյան

Ռ. Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

13/7.13

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.08.10 № 3/38-2/5892-10

Ձեր № _____

1/4.3

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2010թ. N15/15.1/9461-10 գրությամբ ներկայացված «Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության
հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում ենք, որ պարզ չէ, թե ում են տրվելու և ինչ նպատակով են
օգտագործվելու ներմուծված 2 հատ մեքենա լվանալու սարքերը: Անհրաժեշտ է
պարզաբանել նաև, թե ինչ նպատակով են հատկացվում բեռները Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի համայնքին:

Հարգանքով՝

Ա. Զանջուղազյան

Կատարող՝ Ա. Գրիգորյան, հեռ. 595-227

034/17627-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

1/4.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

02.12.10 № 3/38-2/9644-10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն մեր 12.08.2010թ. թիվ 3/3.8-2/5892-10 գրության և հաշվի առնելով
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 13.11.2010թ. N64/01-11 գրությամբ
ուղարկված տեղեկատվությունը, Ձեր 10.08.2010թ. N15/15.1/9461-10 գրությամբ
ներկայացված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական
ապահովության նախարարության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ԼՂՀ-ի Մարտակերտի
շրջանի Վանքի համայնքի աշխատակազմին պատկանող ավտոմեքենաները լվանալու
նպատակով ստացված սարքերը առաջին անհրաժեշտության և սոցիալ-մշակութային
տարրեր չեն պարունակում: Ուստի նշված սարքավորումների առկայությամբ բեռի
բաշխման ցանկով ներկայացված ծրագրի բարեգործական որակումը համարում ենք
աննպատակահարմար:

Հարգանքով՝

Ա. Զանջուղազյան

034/28266-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 13/7.13

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ԱԿ 13-6/1284-10

12.08.10
1/4.3

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. օգոստոսի 10-ի թիվ 15/15.1/9461-10 գրությամբ կարծիքի ներկայացված
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության
նախարարության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, գրության մեջ չկա որևէ հիշատակում առ այն, թե
ինչ նպատակով են օգտագործվելու ներմուծվող ապրանքները, մասնավորապես
անհրաժեշտ է ներկայացնել սպառիչ հիմնավորումներ, որ ներմուծվող ապրանքները
շահույթ ստանալու նպատակով չեն օգտագործվելու: Անհրաժեշտ է ներկայացնել նաև
շահառուների ցանկ:

Ծրագրի բարեգործական որակելը նպատակահարմար ենք համարում վերը
նշված պահանջները բավարարելուց հետո:

Ա. ԱՂԱՎԵՐՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
վիճազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/17611-10

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА
НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ
ПО КООРДИНАЦИИ
БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ



CHARITABLE PROGRAMS COORDINATING
COMMISSION OF THE GOVERNMENT
OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

13/7.13

Սանփանակերտ, Ազատամարտիկների փ. 54

հեռ. 94-53-64

«27» 08 2010 թ.

1/4.3 N 98/01.7

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2010 թվականի օգոստոսի 19-ի թիվ 15/15.1/9834-10
գրության, հայտնում ենք, որ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից ստացված
բեռը նրա ցանկությամբ նախատեսվում է տրամադրել ԼՂՀ Մարտակերտի շրջանի
Վանքի համայնքին՝ նպատակ ունենալով բարելավել տարածքը և զարգացնել
սոցիալական օբյեկտները (դպրոցը, մանկապարտեզը և այլն), բնակիչների
կենցաղային պայմանները, քանի որ այդ տարածքում տեղակայված է Արցախի
մշակութային արժեքներից մեկը՝ իր պատմությամբ և գեղեցկությամբ
հանրապետություն ժամանող բոլոր զբոսաշրջիկների ուշադրությունը գրավող
Գանձասար եկեղեցին:

Բեռի ցանկում նշված 2 հատ մեքենա լվանալու սարքերը (880 ԱՄՆ դոլար
ընդհանուր արժողությամբ, 30 կգ քաշով) նախատեսվում են Վանքի համայնքին
պատկանող ավտոմեքենաների համար:

Հարգանքներով՝

30 08 10

106/18939
30 08 10

Նախագահի տեղակալ

Լ. Դուլյան

ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА
НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ
ПО КООРДИНАЦИИ
БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ



CHARITABLE PROGRAMS COORDINATING
COMMISSION OF THE GOVERNMENT
OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

1/4.3

Կ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 54

Նկ. 94-53-64

« 12 » 07 2011 թ.

N 1-01/7

« Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Տնօրենի պարոն Տեր-Սիմոնյան

Սույնով խնդրում ենք բարեբար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական
Միացյալ Լիբիությունների Դուրայ քաղաքից 2010թ. հունիսի 24-ին ԼՂՀ սցզխալական
ապահովության հասցեով ուղարկված բնիք ցանկից հանել 2 հատ «KARCHER K4 800I»
տնտակի ջրով լվացող սարք (C 1499, արժեքը՝ 880 ԱՄՆ դոլար, քաշը՝ 30 կգ.):

Միատարմանակ տնօրենից խնդրում ենք, որ « Զինանոցների նախարարության և «
ԿԼԿ ՊԼ» կոզմիտիկ կողմից նշված սարքերը բարեգործական որակելու վերաբերյալ կան որոշ
դիտարկություններ:

Խնդրում ենք մուտքագրել բնիք (C 1499, արժեքը՝ 2690 ԱՄՆ դոլար, քաշը՝ 128 կգ.)
և (C 1502, արժեքը՝ 12579 ԱՄՆ դոլար, քաշը՝ 1530 կգ.), ընդգրկել « Կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի օրակարգում՝ որպես
բարեգործական որակելու հարցը:

Կցվում են՝

բնիքի լրամշակված ցանկը,
« Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի օրակարգում՝ որպես
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի օրակարգում՝ որպես
Ազգիկ 11 թերթ:

Տարվաներից

Նախագահ՝

S. Ter-Simonyan
Ս. Ասմատյան

Մ. 106/546
07 2011

ՏԵՆԵՎԱԼՔ

« Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սցզխալական ապահովության հասցեով բնիք ներմուծման ծրագրի մասին» ծրագրի մասին
« Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

Գիտության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
« Զինանոցների նախարարություն - 02.12.10, N 3/3.8-2/9644-10	
1. Պարզ չէ ավտոմեքենաները վանալու սարքերի բարեգործական սարքերը	1. Բնիք ցանկից հանված են երկու ավտոմեքենաները վանալու սարքերը
« Կառավարության սղջները պետական եկամուտների կոմիտե - 12.08.10, N ԱԱ/3-6/1284-10	
1. Ինչ նպատակով են օգտագործվելու ստացված ավտոմեքենաները	1. Կցված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի գրությունները

1/4.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԼՆՆԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ -
քաղ. երևան

-Ա

1/4.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻԷԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱ-
ՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՆՈՎ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11, Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի 1-ի N -11,
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի -ի N եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից «ԱՅՔ» կրթական
կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի
քաղաքապետարանի հասցեով ստացված էկոլոգիական հետազոտությունների
ուսումնական սարքավորումների (8 տեղ, 62 կգ ընդհանուր զաշով, 354470 ռուսական ռուբլի
ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓ Եւ ՍԱՓԱՄ մաքսատուն)
ներմուծման և քաղաքային համայնքի թիվ 1 ու թիվ 2 միջնակարգ դպրոցներին անհատյց
հանձնման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարա-
նին՝ նշված բեռի հանձնման ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված
կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Է/4. 4

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

11.01.2011թ. № 1.1/3.8-2/18-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.12.2010թ. N15/15.6/17031-10 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով ստացված
բեռի ներմուծման և անհատույց հանձնման ծրագրի մասին ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ
հայտնում ենք որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Շահնազարյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/232-11
11.01.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 52 66 02, ֆաքս/ֆաքս/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/13604-10 " 10 01 2011

Է/4. 4

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 29.12.2010թ, N 15/15.6/17031-10 գրության, հայտնում ենք, որ
<<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի
հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց հանձնման ծրագրի մասին>> որոշման
նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և
առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄԿՐՏՅԱՆ

Կադր.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

031/6-11
01.10.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.

№ ՄՄ/Յ-Գ/3354-10
30.12.2010թ.

1/4.4

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 29-ի համար 15/15.6/17031-10 գրությամբ կարծիքի ներկայացված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց հանձնման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆԱՎԵՐԴՅԱՆ

Կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին, հեռ. 59 43 49

044/31535-10
30.12.2010թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

1/4.4

3301ք. Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

« 10 » 01 2010թ. № 01/4284-11

Ձեր 2010-12-29 № 15/15.6/17031-10

Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական

ծրագրերի համակարգման հանձնաժողովի

նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հ Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացրած Ռուսաստանի Դաշնության «ԱՅԲ» կրթական կազմակերպության կողմից «Հ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով ստացված էկոլոգիական հետազոտությունների ուսումնական սարքավորումների ներմուծման և քաղաքային համայնքի թիվ 1 ու 2 միջնակարգ դպրոցներին անհատույց հանձնման ծրագիրը:

Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված կարգով, նշված ծրագիրը որակել բարեգործական:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝ Լ. Հարությունյան
Հեռ. (0285) 235-45

117/4-11
10.01.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ հունվարի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

1/4.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՎՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՈՒ ԼԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի -ի N ՀՔ/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում երեխաների անվճար պատվաստման նպատակով ստացված 16000 սրվակ ԿԿԽ պատվաստանյութի՝ իր լուծիչով (15 տեղ, 284 կգ ընդհանուր քաշով, 46400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2908.65 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթենց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

11.01.2011թ. № 1.1/3.8-2/22-11
2եր № 1/4.5

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.12.2010թ. N15/15.6/17003-10 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Շահնազարյան

034/227-11
11.01.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

1/4.5

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

12.01.2011թ. N 148/22/31-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.12.2010թ. թիվ 15/15.6/17003-10 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

Կապարող Ա. Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/379-11
12.01.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.

№ 3-6/3351-10
30.12.2010թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 29-ի համար 15/15.6/17003-10 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱԿԵՐԴՅԱՆ

Կապարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/31565-10
30.12.2010թ.

**ԱՅՄԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 2011 թվականի Մ Մ - -Ա
 քաղ. երևան 1/4.6
**«ԱՌ-ԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ԲԵՌՈՒ
 ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի 1-ի N ՖԲ/ՄարտՄիս -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի -ի N ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի -ի N եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «Հայ ավետարանի առաքելություն» բարեգործական կազմակերպության կողմից «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (183 տեղ, 4061.92 կգ ընդհանուր քաշով, 56400 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9000 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:


2. «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու ու Շիրակի մարզպետներին:

N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը ըստ չափման միավորի /արկղ/	Ընդհ. քաշը /կգ/	Մաքուր քաշը /կգ/	Արժեքը \$	Հահառուները
1	Բժշկական պարագաներ	111	111	798,92	452	18250	1/4.6 42 արկղ - «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ 9 արկղ - «Սբ. Աստվածամայր» բլ 11 արկղ - «Սեբաստիա» բլ 42 արկղ - «Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. կենտրոն» ԲԳ
2	Հաշմանդամի անվասայլակ	1	1 հատ	29	29	350	3 հատ - «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ 1 հատ - «Սբ. Աստվածամայր» բլ 1 հատ - «Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ» ԲԳ
3	Հիվանդանոցի մահճակալ	2	2 հատ	34	34	1500	«Նորը-Սալաշ» ԲԿ
4	Սիստեմայի շտատիվ	1	1 հատ	4	4	375	«Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ
5	Հիվանդի պատզարակ	5	5 հատ	45	45	1125	3 հատ - «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ 1 հատ - «Սբ. Աստվածամայր» բլ 1 հատ - «Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ» ԲԳ
6	Ատամնաբուժ. պարագաներ	1	1	3	3	45	«Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. կենտրոն» ԲԳ
7	Վիրաբուժ. պարագաներ	1	1	9	9	500	«Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ
8	Ամեստիզացիայի մեքենա	1	1 հատ	363	363	25000	«Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բլ
9	Ծածկոցներ	6	6	54	54	425	2 արկղ - Հայ Ավետարանական ընկերու-ուն 2 արկղ-Գյումրու «ԱՌԴԱ» մ/գ 2 արկղ- Կարիքավոր քաղաքացիներ
10	Խաղալիքներ	4	4	25	25	300	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
11	Թելի կծիկներ	7	7	23	23	350	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
12	Գրասեղան	11	11 հատ	374	374	540	«Ձեթոուն» ուսումնական կենտրոն
13	Մանկական աթոռներ	7	36 հատ	42	42	700	Վանաձորի թիվ 5 մ/գ
14	Գրեմական պիտույքներ	6	6	53	53	270	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
15	Գրեմական պիտույքներ	4	4 պալետ	2094	2050	4500	1 պալետ - «Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ» ԲԳ 1 պալետ - Երևանի ք. 125 դպրոց 1 պալետ - Կարիքավոր քաղաքացիներ 1 պալետ - Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. բնկչ
16	Մանկական հագուստ	3	3	20	20	520	1 արկղ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի բնակիչներ 2 արկղ- Կարիքավոր քաղաքացիներ
17	Տղայի ժակետներ	1	1	5	5	130	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
18	Մանկ. գուլպա, ձեռնոցներ	1	1	3	3	125	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
19	Մանկական կոշիկներ	3	3	20	20	400	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
20	Աղջկա ժակետներ	2	2	15	15	175	«Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. կենտրոն» ԲԳ
21	Մանկական գլխարկներ	1	1	9	9	150	Գյումրու ք. 6 մ/գ
22	Վերնաշապիկներ	2	2	14	14	170	Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի բնակիչներ
23	Կանացի հագուստ	2	2	25	25	500	Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի բնակիչներ
24	Ընդամենը	183		4061,92	3671	56400	

Տրանսպորտային ծախսեր

9000





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

1/4.6

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

11.01.2011թ. № 1.1/3.8-2/17-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.12.2010թ. N15/15.6/17022-10 գրությամբ ներկայացված «ԱՌԴԱ»
բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի
մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Շահնազարյան

Կատարող՝ Ա. Այվազյան, հեռ. 595-227

034/233 - 11
11.01.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԼՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԼԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

1/4.6

« 11 » 01 2010 թ.

N 1.1/3.8-2/17-11

Ձեր 2010-12-29, 15/15.6/17022-10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված
բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ տեղեկացնում եմ, որ
նախարարությունը վերոհիշյալ նախագծի վերաբերյալ դիտողություններ և
առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

Կատարող՝ Բարեգործական ծրագրերի
համակարգման բաժին
հեռ. 525-893

040/233 - 11
11.01.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

1/4.6

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

12.01.2011թ. N հ.հ/22/32-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.12.2010թ. թիվ 15/15.6/17022-10 գրության կապակցությամբ՝ «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Լ. ԼՈՒԵԿՅԱՆ

Կապարող Ա. Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/386-11
12.01.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.6

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.

N: 3-6/84385-10
30.12.2010թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 29-ի համար 15/15.6/17022-10 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կապարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/39537-10
30.12.2010թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ 1/4.6

« 30 » 12 2010թ.
N: 01/5271-10

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 29.12.2010թ.
թիվ՝ 15/15.6/17022-10

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի
ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Ձեռք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

116/31580-10
30.12.2010թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 1/4.6

☑ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/104.3/17-11
« 13 » 01 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 29.12.2010թ. թիվ 15/15.6/17022-10 գրությամբ.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում ԱՄՆ-ից «Հայ ավետարանի առաքելություն»
բարեգործական կազմակերպության կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
հասցեով ստացված բարեգործական բեռի բաշխման ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԳԻԶԱՐՅԱՆ

114/479-11
13.01.2011թ.

կառ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՆԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2010 թվականի N Մ-
քաղ. երևան -Ա Ը/4. 7

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱԿԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի -ի N ԱԱ/3-4/-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Բարեգործական որակել Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված օգտագործված աթոռների և սեղանների (217 տեղ, 3045 կգ ընդհանուր քաշով, 43365 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7535 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:


2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ Ը/4. 7
ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 217
տեղ, 3045 կգ բրուտտո, 3045 կգ նետտո քաշով 43,365
ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը՝ 7,535
ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի բաշխման

ՑԱՆԿԸ

h/h	Ապրանքի անվանումը	Տեղ	Քաշ բրուտտո կգ	Քաշ նետտո կգ	Արժեք ԱՄՆ դոլար	ԼՂՀ Քաշաթաղի շոք. սոցապ վարչություն
1.	Դպրոց. օգտ. աթոռներ և սեղաններ	217	3045	3045	43,365	217





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

1/4.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

24.12.10 № 3/3.8-2/10750-10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 23.12.2010թ. N15/15.1/16621-10 գրությամբ ներկայացված «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուրյան

034/30914-10

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.7

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

034/3-6/3309-10
28.12.10

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Սույն թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 15/15.1/16621-10 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Մ. Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ. 594 649

034/3/272-10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԵՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2010 թվականի N Ա-
քաղ. երևան

-ա 1/4.8

**«ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի -ի N 3/3.8-2/-10, Հայաստանի Հանրապետության աշխարհաբնի և սոցիալական հարցվերի նախարարության 2010 -ի N ՖԲ/Մարտի-1/-10, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի -ի N 3-6/-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի կողմից հասցեով ուղարկված բեռի (400 տեղ, 3802.6 կգ ընդհանուր քաշով, 48562 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, ներառյալ 7765 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, Արարատյան S/U) ներմուծման և բախշման ծրագիրը (բեռի բաշխման ցանկը կցվում է):
2. «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի բաշխման ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

1/4.8


Գ/Գ	Անվանումը	Բրուտո քաշ /կգ/	Նետո քաշ /կգ/	Գինը / ԱՄՆ դոլար/	Բաշխում
1	Օգտագործված հագուստներ	232,3	200,9	5166	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
2	Մեծ և փոքր բարձեր սինդեպոն	9,4	2,8	210	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
3	Վերմակ /բամբակյա/	21,85	19,6	109	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
4	Կտոր բամբակյա	47,8	42,35	1880,5	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
5	Կոշիկներ տղամարդու	75,5	59,5	1435	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
6	Սպորտային կոշիկ /բոթաս/	33,7	26,5	627	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
7	Կոշիկներ կանացի	155,9	129,2	2817	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
8	Կոշիկներ մանկական	22,5	17,4	541,3	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
9	Ռետինե հողաբափեր	37,5	32,9	261	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
10	Չեծամիվ երկամիվ	243,5	243,5	1567,5	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
11	Սամակատ /մետաղական/	22,4	22,4	46	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
12	Աքեթ /փայտյա/	1,8	1,8	8	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
13	Կանացի կաշվից պայուսակներ	7,15	5,75	130	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Կանացի կտորից	4,6	3,4	58	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Մանկական կաշվից	1,1	0,9	4	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Մանկական կտորից	1,4	0,8	5	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Ճամփորդական կտորից	13,8	11,5	318	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Դրամապանակ կաշվից	0,6	0,6	9	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
	Դրամապանակ կտորից	0,7	0,7	8	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
14	Չուգարանի թուղթ	84	76,8	89	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
15	Տելեֆոնից տոպրակներ	24	20	54	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
16	Կոնֆետներ /կարամել/	46,5	35,8	211	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
17	Փափուկ խաղալիքներ	32,9	28,7	445	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
18	Պլաստմասե խաղալիքներ	23,3	21,7	382	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
19	Մետաղական աստիճան	36	36	72	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
20	Ծալովի սեղաններ /մետաղյա/	7,6	7,6	14	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար

1/4.8

21	Օֆիսային աթոռներ հողովակներով	70	70	251	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
22	Փայտյա աթոռ հողովակներով	25	25	80	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
23	Պլաստմասե աթոռներ	14	14	22	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
24	Կարուձևի շյուղ / փայտյա/	0,3	0,3	1,5	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
25	Կարի թելեր	8,85	8,55	81	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
26	Մկրատներ դերձակային	0,25	0,25	2	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
27	Սարգասարքեր	100,8	94	1643	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
28	Պահարան /մետաղական/	264	264	253	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
29	Չեռնափայտեր	11,2	11,2	56	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
30	Հաշմանդամի սայլակ /մետաղական/	20	20	175	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
31	Հագուստի կախիչ /մետաղական/	53,9	53,9	78,5	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
32	A4 ֆորմատի թուղթ	24,2	21,6	29	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
33	Գիրք	51,2	46,1	275	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
34	Գրիչ	8,8	8,15	41	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
35	Մատիտ	16,1	15,6	44	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
36	Ռետին	3,6	2,9	22	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
37	Բլոկնոտ	11,8	10,1	42	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
38	Տետր	10,5	9,4	45	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
39	Չեռքի կրեմ	50,3	45,5	318	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
40	Շամպունյներ	56,8	46,5	712	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
41	Լոզանքի գել	180	158,4	925	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
42	Օճառներ	59,4	54	105	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
43	Պլաստմասե կախիչ	5,4	4,5	12	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
44	Ամառային գլխարկ կտորից	6,5	5,6	157	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
45	Ակնոցներ արևապաշտպան	6,25	3,6	309	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
46	Կերամիկական բաժակներ	20,6	18,4	21	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
47	Միանգամյա օգտագործման բաժակներ	10	8,8	39	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
48	Ռետինե խողովակ՝ բժշկության մեջ օգտագործվող	7,4	6,8	569	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար

1/4.8

49	Բժշկական բինո	8,5	7,2	27	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
50	Չեռոց ռետինե վիրահատական	3,2	2,8	8	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
51	Կերամիկական ամաններ	21	16,7	36	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
52	Խոհանոցային դանակներ	1,2	0,8	16	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
53	Խոհանոցային պարագա, մետաղական կաթսաններ	26,2	24	34	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
54	Ծանրաքար մարմնամարզության համար	72,2	70	68	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
55	Անձեռոցիկներ	136,7	126,3	223	Հայ Առաքելական եկեղեցու Սիրանույշ ճամբար
56	Օգտագործված հագուստներ	232,3	200,9	5166	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ՊՕԱԿ
57	Վերմակ /բամբակյա/	21,85	19,6	109	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ՊՕԱԿ
58	Կոշիկներ մանկական	22,6	17,5	541,4	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ՊՕԱԿ
59	Չեռքի կրեմ	50,2	45,4	318	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ՊՕԱԿ
60	Օճառներ	59,4	53,9	105	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ՊՕԱԿ
61	Օգտագործված հագուստներ	232,3	201	5166	Նոր Նորքի մանկատուն
62	Կտոր բամբակյա	47,8	42,35	1880,5	Նոր Նորքի մանկատուն
63	Կոշիկներ մանկական	22,5	17,4	541,3	Նոր Նորքի մանկատուն
64	Հեծանիվ երկամիլ	243,5	243,5	1567,5	Նոր Նորքի մանկատուն
65	Կանացի կաշվից պայուսակներ	7,15	5,75	130	Նոր Նորքի մանկատուն
66	Կանացի կտորից	4,6	3,4	58	Նոր Նորքի մանկատուն
67	Փափուկ խաղալիքներ	32,9	28,7	445	Նոր Նորքի մանկատուն
68	Պլաստմասե խաղալիքներ	23,3	21,7	382	Նոր Նորքի մանկատուն
69	Կարուձևի շյուղ / փայտյա/	0,3	0,3	1,5	Նոր Նորքի մանկատուն
70	Կարուձևի թելեր	8,85	8,55	81	Նոր Նորքի մանկատուն
71	Մկրատներ դերձակային	0,25	0,25	2	Նոր Նորքի մանկատուն
72	Հագուստի կախիչ /մետաղական/	53,9	53,9	78,5	Նոր Նորքի մանկատուն
73	A4 ֆորմատի թուղթ	24,2	21,6	29	Նոր Նորքի մանկատուն
74	Գրիչ	8,8	8,15	41	Նոր Նորքի մանկատուն
75	Մատիտ	16,1	15,6	44	Նոր Նորքի մանկատուն
76	Չեռքի կրեմ	50,2	45,4	318	Նոր Նորքի մանկատուն
77	Օճառներ	59,4	53,9	105	Նոր Նորքի մանկատուն
78	Ակնոցներ արևապաշտպան	6,25	3,6	309	Նոր Նորքի մանկատուն
ԸՆԴԱՄԵՆԸ		3802,6	3453	40797	





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼՍՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 Լ Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Լ - Գ Լ Ն Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

1/4.8

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
 Հեռ. (+374 10) 59 52 26

29.12.10 № 3/3.8.2/11095.10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
 բարեգործական ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի նախագահ՝
 պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 28.12.2010թ. N 15/15.1/16912-10 գրությամբ ներկայացված Հայաստանի
 Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության
 հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի
 վերաբերյալ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ դիտողություններ չունենք, սակայն
 որոշման նախագծում, ապրաքների բաշխման ցանկում և «Սյունիք» բարեգործական
 հասարակական կազմակերպության կողմից Ձեզ ուղղված 10.11.2010թ. և
 27.12.2010թ. գրություններում նշված բեռի ընդհանուր քաշի և փոխադրման ծախսերի
 վերաբերյալ ներկայացված տվյալների միջև առկա են հակասություններ:

Հարգանքով՝

Ա. Զանցուղայան

Կատարող՝ Ա. Գրիգորյան, հեռ. 595-227

034/31462-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
 Լ Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Լ

1/4.8

« 11 » 01 2011 թ.

N 3P/մայր Ժ/ս 1/
 13-11

Ձեր 28-12-2010թ.
 N 15/15.1/16912-10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
 համակարգման հանձնաժողովի նախագահ
 պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Քննարկելով «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության
 հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության
 բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝
 հայտնում եմ, որ ծրագիրը բարեգործական որակելու կապակցությամբ
 առաջարկություն և դիտողություն չունեմ:

Հարգանքներով

Կատարող՝ Բարեգործական ծրագրերի
 համակարգման բաժին
 հեռ.525-893

010/275-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 1/4.8

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ՎԵՂ/3-6/3344-10
29.12.10


«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. դեկտեմբերի 28-ի համար 15/15.1/16912-10 գրությամբ կարծիքի ներկայացված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

- անհրաժեշտ է ներկայացնել բարեգործական ծրագիր, որտեղ հստակ նշված կլինեն ներմուծվող բեռները, շահառուները, ծրագրի իրականացման ժամկետները,
- որոշման նախագծում «<ներառյալ 8100 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը>> արտահայտությունը փոխարինել «<ներառյալ 7765 ԱՄՆ դոլար փոխադրման ծախսերը>> արտահայտությամբ:

Ծրագրի բարեգործական որակելը նպատակահարմար ենք համարում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

 Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

ՕԼԿ/31421-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР
REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, «Ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyayn 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.region.am 1/4.8

ՕԼԿ/7.4/3996-10
29.12.10

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Ձեր 28.12.2010թ. թիվ 15/15.1/16912-10 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 13-րդ կետի համաձայն հայտնում են, որ «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է «Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության: Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:


ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ



Ա. Սուրյան
0263 3-62-58

119 / 31379-10



08906094
 «ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 Благотворительная
 Общественная Организация
 "С Ю Н И К"
 "SYUNIK" Benevolent Non-
 Governmental Organization

1/4.8

Address: Momik Str. 5,
 378140 Yeghegnadzor, Vayots Dzor, RA
 Tel: +3742 81 2 40 09, 091 409712
 Fax: +374 281 2 40 09
 E-mail: sunik@arminco.com

ՀՀ կառավարության բարեգործական
 ծրագրերի համակարգման հանձնաժողովի
 նախագահ պարոն Ա.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ա.Տեր-Սիմոնյան



Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ամերիկայի Միացյալ Հայկական Ֆոնդի կողմից «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության անունով Հայաստան է ժամանել մեկ բեռնարկ՝ TCNU9292193, 400 տեղ, 2 703 կգ, 48.562 ԱՄՆ դոլար արժողությամբ, որից փոխադրված է 7.765 ԱՄՆ դոլար, սպորտային, դպրոցական պարագաներ և այլն: Բեռը Հայաստան է առաքվել՝ հատելով Բագրատաշենի մաքսային կետը և ժամանակավոր մաքսագերծվելու է Սիսիանի տարածքային մաքսատանը: Սակայն բեռի նախնական զննման ժամանակ պարզվել է, որ բեռի փաստացի քաշը 3802.6 կգ.- է, իսկ հաշիվ-ապրանքագրում թյուրիմացաբար գրվել է 2 703 կգ, ուստի խնդրում ենք ժամանակավոր ներմուծման մեջ կատարել փոփոխություն՝ 2703 կգ-ը փոխարինել 3802.6կգ-ով:

«Սյունիք» բիկի նախագահ՝

Գ. Շահալոյան

08.12.2010թ.

5793



08906094
 «ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 Благотворительная
 Общественная Организация
 "С Ю Н И К"
 "SYUNIK" Benevolent Non-
 Governmental Organization

1/4.8

Address: Momik Str. 5,
 378140 Yeghegnadzor, Vayots Dzor, RA
 Tel: +3742 81 2 40 09, 091 409712
 Fax: +374 281 2 40 09
 E-mail: sunikngo@yahoo.com

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
 եկամուտների կոմիտեի նախագահի
 տեղակալ պրն. Ա Ալավերդյանին
 պատճենը՝ ՀՀ կառավարության բարեգործական
 ծրագրերի համակարգման հանձնաժողովի
 նախագահ պարոն Ա.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ալավերդյան


Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 29.12.2010 թվականի թիվ ԱԱ/3-6/3344-10 նամակի, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Սյունիք» բ.հ.կ.-ի անունով եկած բեռը ծրագրով նախատեսված բեռ չէ, Ամերիկայի Միացյալ Հայկական Ֆոնդի կողմից ուղարկվել է «Երևանի մանկան տուն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի և Հայ Առաքելական եկեղեցու Վայոց Ձորի թեմի «Սիրանուշ» ամառային ճամբարի համար:

«Սյունիք» բիկի նախագահ՝

Գ. Շահալոյան

17.01.2011թ.

43



«Սյունիք» բարեգործական հաստիքային կազմակերպության հասցեով ստացված բերի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

1/4.8

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն - 29.12.10, N 3/3.8-Չ/1035-10</p> <p>1. «Սյունիք» բարեգործական հաստիքային կազմակերպության կողմից ուղղված նամակներում ընդհանուր բաշն ու բեռնափոխադրման ծախսերը տարբերվում են</p>	<p>1. Լշված են տվյալները մինչև բերի գալը (ըստ ունեցած փաստաթղթերի) և բերը ստանալուց հետո (փաստացի): Կցված է կազմակերպության գրությունը</p>
<p>ՀՀ կառավարությունն առջևից պետական եկամուտների կոմիտե - 29.12.10, N ԱԱՅ-6/3344-10</p> <p>1. Ամիլաճեշտ է ներկայացվել ծրագիր</p> <p>2. Ծջտել բեռնափոխադրման ծախսերը</p>	<p>1. Ներկայացված նախագիծը ըստ էության ներմուծման և բաշխման ծրագիր է, ամեն իր տվյալներով</p> <p>2. Կատարված է համապատասխան ճշտում</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

ԼԱՆՍԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2010 թվականի N Մ-
քաղ. երևան -Ա 1/4.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇԵՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՀԱՐԱՆ» ՀԻՄՆԱՀԱՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի -ի N 3/3.8-Չ/-10 և Հայաստանի Հանրապետության կառավարության առջևից պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի -ի N ԱԱՅ-6/-10 եզրակացությունները, որոշում է.

